ՍՈՓԵՐՔ

ՀԱՅԿԱԿԱՆՔ

Ժ.

ՆԵՐԲՈՂԵԱՆ

ՅՈՐԴԻՍ ԵՒ Ի ԹՈՌՈՒՆՍ

ՍՐԲՈՅ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի Տպարանի Մխիթարեանց

ՌՃԳ—1854

ԳՐՈՒԱՏ ԳՈՎԽՍՏՒ

ՑՈՐԴԻՍՆ ԵՒ Ի ԹՈՌՈՒՆՍ

ՍՐԲՈՑՆ ԳՐԻԳՈՐԻ

ՄԵՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ

Ի ՍՈՒՐԲՆ

ԱՐԻՍՏԱԿԷՍ, ԵՒ Ի ՎՐԹԱՆԷՍ

Ի ՑՈՒՍԻԿՆ, ԵՒ Ի ԳՐԻԳՈՐԻՍ

ՆԱ ԵՒ Ի ԴԱՆԻԷԼ

ԲԱՂՁԱՆՔ արարի իմոյ բորբոքի, և տկարութիւն անձին իմոյ նահանջեալ կասեցուցանէ 'ի յօժարութենէս. յոյսն առ Աստուած ասիպէ, և սէր սրբոցն փութացուցանէ. բայց անարժանութիւն իմ ոչ տայ համարձակել. վարանեալ գամ յերկոցունց, և տարակուսեալ 'ի մէջ ծփանաց. երկնչիմ 'ի մեծութենէ իրիս, և զարհուրիմ 'ի հեղգութեանցն ապառնալեաց. փութամ յուսով և սիրով 'ի գաշնակու

՝ն բանիս, և հրաժարեմ 'ի պատկառելի պատուոյս։ Մեծ է սէր քան զամենայն. և գովելի գտանի երկեւղ յորժամ ոչ լինի ընդ տանջանաց. բազում են պատճառք լռութեան, և յոլով կասկածանք արգելման. նուազեալ է

ժամանակ, և ցամաքեալ սէր բազմաց։

Վասն որոյ ոչ ինչ խափանումն եպերանաց տեսանի 'ի յանդգնելոցն յաչաղութեամբ ընդդէմ այնոցիկ, որք 'ի հոգս իրաց հանդիսանան. այլ որ անօրինելոցն է՝ անօրինեսցի. և որ բարկանալոցն է՝ բարկասցի կարճմտութեամբ և նախանձու զինեալ վշտով. զի սէր ճանաչէ զխորհուրդս մարդկանյիւրաքանչիւր միտս որոշեալս և զանազանեալս. որ քննէ զսիրտս և զերիկամունս։ Այլ ինձ բանս յառաջեսցի, և սուրբքն պատուեսցին գովութեամբ, և Աստուած փառաւորեսցի։

Եւ զի քահանայական է տօնս, քահանայից և իրախութիւնս. համազգեաց ինդութիւնս, հովուապետաց հանդէսս. վասն որոյ մանաւանդ պատուելի է 'ի մէնջ. զի մերաշնեայք գոն կոչնատէրքս. և առաւել երախտաւորք հովիւքս սուրբք. հալք հոգեւորք, ծնողք բարեփառք. առաջնորդք յաջողակք.

նաւատեալք խմաստունք, հանդիսա-
գիրք նորահրաշք. արբանեակք
երանաւէտք՝ բազմագիմի երկամբք
ծնանելով, և մեծագոյն սիրո

ծառնութիւն ըստ արժանոյն՝ 'ի տկա-
րութենէ տացցաւ լինել անձին. իսկ
ոչ կամելն ձեռնամուխ լինել ըստ
բաւականին, յանհաւատութենէ
սատուգեալ եղեւ. այլ հաւատով և
սիրով յօժարելն՝ հաճոյ է Աստու-
ծոյ և սրբոց իւրոց. և թէ այս այս-
պէս է հաւատն՝ որպէս և է իսկ,
ապա բարիոք է, քան 'ի քուն թան-
ձրութեան խորդալ ծուլութեամբ,
աշխատասիրութեամբ յօժարամիտ լի-
նել 'ի գործ. և ըստ այսմ սարսափ
ձեռնամուխ լինիմք յիրս. թէպէտ
և կասեալ գտանիմք յարժանեւոյն.
զի քան զոր տայ Աստուած՝ առա-
ւել ոչ պահանջէ. և ոչ սուրբքն
եպերին զըստ կարողութեան հան-
գիստացեալն. այլ սիրով հաճու-
թեան ընդունին և վարձս հատու-
ցանեն։

Եւ արդ որովհետեւ զպատ-
ճառսն 'ի բաց մաքրեցաք զպատճա-
ռասիրաց, եկայք այժմ սիրելիք՝
մատաց աջոք յառեցուք 'ի հանդէս
սրբոցն. և դիտեսցուք որչափ և է
կարողութիւն՝ զերանելեացն զմե-

ծուԹիւն շնորհին. Թերեւս կարաս-
ցուք փոքր 'ի շատէ ընծայաբերը լի-
նել արբոցն. զի կոչնաւէրք մեզ ա-
ւուրս հանդիսի և պատճառք ժո-
ղովոյս՝ ոչ մի ոք կամ երկուք 'ի
հարց բարեփառաց, այլ յոլովից
վերոյ և պատուեցելոց անձինք.
հովուաց և հովուապետաց հաւա-
քումն. քահանայապետից քահա-
նայացելոց, և պատուով ճոխացե-
լոց մեծուԹեամբ. Արիստակէս և
ՎրԹանէս, Յուսիկ և Գրիգորիս.
ընդ որս և մեծն Դանիէլ աքանչելի
երեւեալ, յայլասեռ ցեղէ՝ բարի
արդասիք առ այսոսիկ միացեալ.
Եւ ոչքա երանելիքս զորոց զյիշա-
տակս ոճնախմբեմք, յառաստա-
բուղիս աղբերէն յառաջեալք, ան-
ճառելի վտակաց բղխմամբ՝ զծարա-
ւի անդս մտաց մերոց ոռոգեալք
յաստուածային հոսմանցն վտա-
կաց։ Տունկք տեղիչալիք 'ի մեծա-
գոյն բուրաստանէն բողբոջեալք.
բարուենակք բեղնաւորք 'ի հայրա-
կան որԹոյն ուռ շառաւիղեալք.
ծաղիկք ծիրանափառք, 'ի ծովայ-

ին ծոցոյ ծաղկոցէն ընձիւղեալք. պտուղք դեղեցիկք 'ի բարիոք արմատոյն բարուոք բոլորեալք, քաղցրահամք և վայելչաղարդք. ցանկալիք և քաղցրելիք. արեանաւուք՝ հօրն արփիածագ. պերճացեալք պատուով վեհագոյն. Թագակառոյցք և Թագաւորազունք. բանիբունք և բերկրահամբոյրք. քարոզք պատուիրանին Ճշմարտութեան, և քաջամարտիկք 'ի պատերազմի ընդդէմ այսոցն չարութեան. խոսեալք առաջի Թագաւորաց ըզվկայութիւն տեառն ամենայն համարձակութեամբ, և նահատակեալք Ճշմարտաքարոզ վարդապետութեամբ. քահանայական շնորհիւ պսակեալք, մարտիրոսական հանդիսիւ պայծառացեալք, վկայական անուն ժառանգեալք, 'ի գանձ տեառն յաւելեալք, և յարքայութիւնն երկնից փայլակնանման երեւեալք. դասակիցք դասուց անմարմնոց, և փառաբանիչք փառաց բարձրելոյն: Արիստակէս մեծ քահանայապետ, մեծափառ հօրն փո-

խանորդ. ըստ գրեցելումն՝ Փոխա-
նակ հարց եղիցին որդիք. ոչ միայն
ժառանգ հայրենի պատուոյն, այլ
և սրբութեամբ վարուց՝ հօրն հա-
ւասարորդ գտեալ. մանաւանդ թէ
և կուսութեամբ առաւելեալ եւս
քան զնոյն. սուսեր հոգեւոր երե-
ւեալ ճշմարտապէս բանիւ վարդա-
պետութեան. անակնառու յան-
դիմանութեամբ՝ յանմոռացունից պ-
տեցողաց 'ի վերայ պատուիրանի
տեառն խողխողեալ՝ առաքելաբար
զմահ ընդունէր, 'ի կաճառս կեն-
դանեացն թեւակոխելով. զի միշտ
կենդանի գոլով Աստուծոյ ըստ
տերունական հրամանին. յեկեղե-
ցիս անդրանկաց գրելոց 'ի յեր-
կինս 'ի վերին Երուսաղէմ որ է
մայր մեր ամենեցուն. յազատն 'ի
վայրաքարշ վրդովմանց, հուպ առ
Երրորդութիւնն. ուր սերոբէիցն
դասք, քերոբէիցն գունդք, աթո-
ռոցն ջոկք, հրեղինացն հոյլք,
ճշմարտապէս անդ և քահանայա-
պետն մեր սուրբն Արիստակէս. ուր
և փառաւորէ իմանալի ձայնակցու-

թեամբ ընդ երկնայնոցն դասուց
ղբահանայապետն Քրիստոս զփա-
ռաւորեալն ընդ Հօր և Հոգւոյն
անլռելի ձայնիւ յաւիտեան։

Սա էր 'ի կառուցման 'ի վերին
հաւատոյ 'ի նիկիական հարցն հա-
ւաքումն՝ փոխանորդ հօրն առա-
քեալ 'ի Հռովմայեցւոց մեծագա-
հութիւնն. մեծափառ և զարմա-
նալի հրաշիւք անդ փառաղարդեալ.
'ի մէջ բազմախուռմբ հարանցն սրբ-
ոց հանդիսաւոր երեւեալ. 'ի վե-
րայ կապուտակ աղեացն լայնատա-
րած լճին լուութեան վեհաւէտ և
քաջմնածածան կորովակի սիքա-
շարժ թանձրութեամբ ջուրցն Ով
կիանոյն՝ սիգաքայլ ոտիւք սրընթա-
ցութեամբ սխրացեալ, անվեհեր
դիտմամբ յիսուսաբար 'ի նկատեալ
տեղին հասանէր։ Ոչ պետրոսօրէն
երկմտէր, այլ փրկչաբար խիզա-
խէր։ Եւ ժողովելոց հարցն բազ-
մութեան՝ սխրալի հիացումն առ-
նէր. և զանդրադարձութիւնն եկա-
ւորութեամբ՝ ոչ տարակուսանօք
ինչ հայթայթէր, կամ յառաջար-

կեալ հանդիսէն կասէր. այլ նոյնա-
ձեւ օրինակաւ համարձակապէս 'ի
հաստատուն երկիր ելանէր. որ և
հեռք հեռագնացութեանն մինչեւ
ցայսօր ժամանակի լուսաշաւիղ է-
ներեւմամբ 'ի վերայ երեսաց ջուրցն
տեսանի առ 'ի յիշատակ սրբոյն
աքանչելեաց. և ճշմարտապէս ամե-
նայն ուրեք 'ի տեսողացն ստու-
գիւ պատմի առանց երկբայութեան
որպէս և է ճշմարիտ. նա և թըշ-
նամեաց վկայութեամբ հաստատի
հաւատեաւ, որ զօրաւոր է յամե-
նայնի. այլ և տուն Աստուծոյ և
տաճար սրբութեան 'ի տեղւոջն
հաստատեալ, առ 'ի վկայութիւն
հրաշիցն և 'ի հաւատ տեսողաց:
Յորոց հիացմամբ փառս վերառա-
քի հրաշագործողին Քրիստոսի.
զի Աստուած փառաւորեալ է 'ի
խորհուրդս և 'ի բանս և 'ի գործս
սրբոց իւրոց ճշմարտապէս: Եւ ըզ-
փառաւորիչս իւր փառաւորէ փա-
ռաւորեալն յամենայն 'ի գործս
բարիս որդւոց մարդկան. զորոց
տեսեալ զմեծապաքանչ հրաշս ժողո-

վուրդք հաւատացելոց, փառաւո-
րեն զՀայրն երկնաւոր զտուիչն
այնպիսի իշխանութեան մարդկան:
Սա դառնայր 'ի Ժողովոյն Նիկիայ և
գայր յաշխարհս Հայոց մեծաւ
հանդիսիւ, շնորհօք Հոգւոյն սրբոյ
զօրացեալ, հանգունատիպ փրկչին
մերոյ Յիսուսի դառնալոյն զօրու-
թեամբ Հոգւոյն 'ի Գալիլեա. և
եկանէր համբաւ զնմանէ ընդ ամե-
նայն կողմանս գաւառաց ուր և
հասանէր. ոչք ասէին՝ Այս այր է
որ իշխանութեամբ սատակէ հողմոց
և ծովուց ըստ օրինի փրկչին Յիսու-
սի և հնազանդին սմա: Նա և այսոց
պղծոց հրաման տայ և եկանեն. և
զամենայն ցաւս ապաքինէ 'ի մարդ-
կանէ զօրութեամբ տեառն իւրոյ:
Ոչք լուեալ բերէին զամենայն հի-
ւանդս և ախտաժէտս և ընկեանուին
առ ոտս նորա և բժշկէր զամենե-
սեան. և տեսեալ բազմաց զեղեալ
պքանչելիսն, տային փառս Աս-
տուծոյ և ասէին, որպէս լուաք՝
այնպէս և տեսաք: Եւ այսպիսի
մեծապքանչ հրաշիւք և չքնաղագեղ

ՀՈխուԹեամբ գայր հասանէր յաշ-
խարհս Հայոց, բերելով ընդ ին-
քեան զգիրս հաւատոյ զեղեալն 'ի
մեծէ ժողովոյն. և մատուցանէր
հօրն իւրում սրբոյն Գրիգորի և
մեծի Թագաւորին Տրդատիոսի.
որք մեծաւ ուրախուԹեամբ ընկա-
լեալ բերկրէին, և յաւելուին 'ի
նոյն ըստ պատշաՃի, խնդրելով 'ի
տեառնէ՝ զի 'ի նոյնն հաստատ կաց-
ցեն մնասցեն իւրեանց վիՃակեալ
ժողովուրդս:

Սա կացեալ զկնի հօր իւրոյ մե-
ծին Գրիգորի յաԹոռ հայրապե-
տուԹեանն ամս եւԹն, բարուք վե-
րակացուԹեամբ և Ճշմարիտ վար-
դապետուԹեամբ յանդիմանելով
զչարսն. և որպէս ասացաւ՝ յԱրքե-
ղայոսէ ամբարիշտ բռնաւորէ վասն
սատակագին յանդիմանուԹեանն՝
սրով զմահ ընկալեալ, հասանէր
խնդուԹեամբ առ Քրիստոս, առ
որ անՃկացեալն էր 'ի մանկուԹե-
նէ. ասելով, Տէր ոչ զոք սիրեցաք
յաշխարհի, բայց միայն զքեզ. և
ԹէՀ, թողաք զամենայն և եկաք

զկնի քո, և զբանն քո պահեցաք ճշմարտապէս. տուր մեզ զողորմութիւն քո. այսպէս վճարեաց զկեանս սուրբ հովիւն մեր. սուգ մեծ թողեալ վիճակելոց իւրոց. որոց վասն աղօթէ միշտ առ տէր ասելով. Զգործս ձեռաց քոց մի անտես առներ։

Իսկ զկնի սորին երանելին Վրթանէս հարազատ եղբայր սորա. ոչ միայն ըստ մարմնոյ, այլ և ըստ հոգւոյ եւս՝ առաքինութեան նորին գողով համեմատ, բազմագիմի պատուով պանծացեալ. որ և ուղղափառ վարդապետութեամբ զճշմարտութիւն միշտ քարոզելով, հաստատեր եւս կրկին անգամ իւրով յօժարական երկամբք զաթոռն թագաւորական, բարեպաշտութեամբ և ուղղափառ հաւատով զարդարեալ. կայսերական պատուով պանծացեալ, և 'ի պատիւ սրբութեան շքեղացեալ. յառաջադէմ յամենայն գործս բարութեան, արիագոյն 'ի վաստակս առաքինութեան։ Զբարեմիտն

յորդորելով 'ի գործս բարիս, և զբարն յանդիմանելով բանիւն ճշմարտութեան. արդարեւ քանոն հաւատոյ և չափ աստուածպաշտութեան և հիմնադրութեան յամենայնի ճանաչէր. 'ի մարմնի միշտ կենդանի վկայ Քրիստոսի. սպանանելով զանդամս զերկրաւորս ըստ առաքելոյն բանի: Անմարմնաբար ճգնութեամբ, ճշմարիտ քաջաքաւարութեամբ, ուղիղ վարդապետութեամբ և բարուք վերակացութեամբ՝ զանձն օրինակ տալով բազմաց և նպատակ բարեաց զկնի եկելոց, ըղձալի մարդկան և հաճոյ Աստուծոյ:

Յաւելեալ 'ի հարս հայրապետն, 'ի քահանայս քահանայապետն, 'ի հովիւս հովիւն քաջ, որ զանձն իւր միշտ եդեալ էր 'ի վերայ հօտին, 'ի ճգնաւորս անմարմնաբար ճգնեալն. 'ի վկայս՝ հանապազօր մեռեալն աշխարհի. որոյ աշխարհ 'ի խաչ ելեալ էր՝ և ինքն աշխարհի: Ի մարտիրոսս՝ միշտ մարտուցեալն 'ի վերայ պատուիրանացն Աստուծոյ. 'ի

նահատակս՝ հանապազօր նահատա-
կեալն ըստ հաճոյից Աստուծոյ. 'ի
մենամարտս՝ բարեւոք մարտուցեալն
ըստ օրինի տեառն. 'ի սիրելիսն Ա-
ստուծոյ՝ միշտ անձկացեալն առ նա
սիրով. որ միշտ փափագէր զելա-
նելն 'ի մարմնոյ աստի և զլինելն առ
Աստուած. որ հանապազ գոչէր
ընդ մեծին Դաւթի բաղձալի սիրով,
Ե՞րբ եկից երեւեցայց երեսացդ Ա-
ստուծոյ: Վաղագոյն հրաժեշտ խնդ-
դրելով յախտաձիւն կենացս ցանկա-
լին վերնոց. և մեզ յոյս բարեաց առ
Աստուած և պարծանս առ մարմ-
նակից մարդիկ. որ և բարեխօսէ
միշտ առ տէր վասն հօտի իւրոյ աստ
ուածացելոյ:

Այլ և շառաւեղ տորին սրբութ-
թեան մեծայոյն և յուսոյ ժա-
ռանգն. որ յոլովագոյն յուսով
յուսայր 'ի յոյն առատապարգեւ.
յուսով կարդալով զանուն Ա-
ստուծոյ զյոյն ամենեցուն յոգնա-
կանութիւն յուսացելոց 'ի յոյն
բարի, Հշմարիտ քահանայապետն
Յոյն յորջորջեալ. փոխանորդն

հօրն աթոռոյն, և նախանձաւոր նո-
րին առաքինութեան։ Այսու զնա-
խանձ տեառն յանձին կրելով հան-
գոյն մեծին Եղիայի, 'ի վերայ պատ-
ուիրանացն Աստուծոյ նոհատա-
կեալ նման մեծին Յովհաննու մը-
կըրտչի։ Արէժինգիր փառաց փըրկ-
չին մերոյ Քրիստոսի, որգուոյն Աս-
տուծոյ վկա ճշմարտութեամբ.
հովիւ հոգեւոր՝ հօտին Քրիստոսի,
որգարեւ տեառն նմանեալ, զանձն
գնելով 'ի վերայ ոչխարաց, գորո-
վագութ սիրով հոգայր մեծապէս
վասն փրկութեան հօտին իւրոյ.
գթածաբար գոչէր առ բարեգութն
և ողորմածն Աստուած, Մի մերժեր
զմեզ յողորմութենէ քումմէ. մի
ցրեր զուխաս քո. մի 'ի բացէ առ-
ներ զողորմութիւնս քո 'ի մէնջ. մի
մատներ զմեզ խաղառ վասն ա-
նուանդ քումմ սրբոյ. այլ զերծո
զմեզ յչարոգայթէ որսողին վասն
Գրիգորի սիրելւոյ քո, և վասն
Ռատակիսի ընտրելւոյ քո, և Ալբ-
թանիսի սրբոյ քո. յիշեա տէր ըզ-
Գրիգոր և զամենայն հեզութիւն

նորա. որպէս երդուաւ տեառն և ուխտաւ եդ Աստուծոյ Իւրոյ, թէ ոչ ելից 'ի խորութեան վերապէս և 'ի միջոյ թուեաւոր գազանացս. թէ տայց քուն աչաց, կամ նիրհ արտեւանաց. թէ տեսից զլոյս արեւու, մինչեւ զաւետիս ընկալայց փրկութեան ազգիս այսորիկ. թէ բերկրեցայց սրտիւ, մինչեւ գտից զտեղի արկանել հիմն տաճարի տեառն 'ի գաւառիս յայսմիկ։ Եւ արդ տէր, յիշեա զուխտս վաստակաւորին քոյ. և զնեղելոց անձանց պաղատանս մի անտես առներ. տուր փառս անուան քում որ փառաւորեալդ ես յաւիտեան։ Ընձինք նեղեալք և հոգիք ձանձրացեալք յանօրինաց յաղուցելոց 'ի վերայ մեր, աղաղակեմք առ քեզ Քրիստոս փրկիչ մեր. լուր ձայնի աղօթից յուսացելոցս 'ի քեզ. և փրկեա զմեզ 'ի հալածչաց մերոց. զի քեզ փառս վերառաքեսցուք ընդ Հօր և Հոգւոյդ սրբոյ։

Այսպիսի գորովագութ սիրովաղօթեր քաջ հովուապետն մեր և արի երջանիկ ծնողն ըստ հոգւոյ երա-

նելին Յուսիկ 'ի վերայ հօտին իւ-
րոյ. այսպիսի արտօսրագոչ պաղա-
տանս մատուցանէր առ Աստուած
վասն բանաւոր խաշանց իւրոց.
այսպիսի սիրալիր գթով գոչէր առ
ա՛ր վասն արագահաս օգնականու-
թեան, շարժելով 'ի գութ զայն որ
ոչ երբէք դադարէ 'ի գթալոյ։ Եւ
այսպիսի թախծեալ սրտիւ հեղոյր
զանձն առաջի տեառն. և յորդա-
ռատ արտասուօք ուռոգէր զերեսս
երկրի. որ և այսպիսի աղօթիւք սա-
տակէր զանօրէնն Յուլիանոս զան-
մտուութեամբ յարուցեալն 'ի վե-
րայ եկեղեցւոյ սրբոյ։ Եւ ինքն որ
ըստ օրինակի տեառն զամենեցուն
կամէր կեալն և 'ի գիտութիւն ճըշ-
մարտութեան զգալ, փութանակի
հասանէր առ թագաւորն, թերեւս
կարասցէ շահել զփրկութիւն ո-
գւոյ նորա։ Եւ անդ 'ի ձեռն ա-
ռեալ զխրատս վարդապետութեան
իւրոյ, բազում ջանիւ հնարէր դար-
ձուցանել զնա յապարատան բա-
ղուցն զոր ստացեալն էր. յուշ
առնելով նմա զտեառն մարգասի-

րութիւն և զերախտիս նախնեացն
և զքանս վասատակոց նոցին. Ով թա-
գաւոր, ասելով, ընդէր անմտանաս
'ի քրէական մեղս յանդգնելով. է-
կեղեցի գնեալ է պատուական ա-
րեամբն Քրիստոսի, և քարինք սո-
րա շաղախեալ են 'ի կայլակահօս աղ-
բերէ կողից նորա. և շինուած յար-
կի սորա առաքելովք և մարգա-
րէիւք հիմնացեալ է. հայրապետաց
և վկայից կատարմամբ աւարտեալ
է. հրեշտակաց բնակարան և մարդ-
կան քաւարան խոստովանեալ է.
ամենառ աստուածութեանն 'ի սա
կառուցեալ է. զնորածնեալսն՝ որ-
դիս Աստուծոյ առնէ. զամուսնա-
ցեալսն՝ ողջախոհութեամբ զարդա-
րէ. զննջեցեալսն հաղորդս առնէ
տեառն արքայութեան: Հիմ առ-
նես զսա տեղի և բնակարան դիւաց.
զինարդ զտաճար Աստուծոյ՝ բա-
գինս կռոց. որպէս զյարկս փրկու-
թեան՝ տեղի կորստեան. ընդէր ըզ-
տուն արքութեան՝ վայրս պղծու-
թեան. զինչ օգտեցան այնոքիկ որք
այդպէս անմտացան. ոչ են թագա-

ուղքն առաջինք չարագոյնքն և ա-
պարատանք, որք պաշտօնեայք էին
դիւաց. ոչ ապաքէն որպէս զծուխ
պակասեցան, և իբրեւ զփոշի զոր
տարաւ մրրիկ. և երանի՛ թէ այս-
չափ միայն. այլ կան և մնան լուց-
կինք յաւիտենական տանջանացն: Եա
զքեզ կամիմ զի ընդ երկրաւոր թա-
գաւորութեանդ՝ և զերկնիցն ժա-
ռանգեսցես զարքայութիւն. և ընդ
անցաւոր փառացս՝ զանանցն առ-
ցես փառս: Յիշեա զվէմն հաւա-
տոյ զՏրդատիոս և զԳրիգորիոս,
զհաւն իմ և զհաւն քո. ուստի կըր-
կին կոփեցայք ըստ մարմնոյ և ըստ
հոգւոյ. նոքա զդիւաձոյլ պատ-
կերսն խորտակէին, և զմեհեանսն
քանդէին, և 'ի տեղիսն եկեղեցիս
հիմնարկէին: Եւ դու զտաճար Ա-
տուծոյ բնակարան դիւաց առնես
և տեղի կռոց պատրաստես: Եւ ո-
րոմ տանջանաց չիցես արժանի.
կամ որ գեհեն զքեզ ոչ այրեսցէ.
վասն զի կրկին է ապարատանու-
թիւնդ. ուրացութեամբ և 'ի սըր-
բութիւնսն մեղանչես. զի թէ 'ի

վայրաբնակ տեղիս կառապաշտեն կորուստ է անձին, ապա զոր նե-
րուն թողութեան ունիցի որ առ
ուզանումն Աստուծոյ զպատկերս
դիւաց դնիցէ. քանզի զինչ նա-
զարդութիւն է լուսոյ ընդ խաւա-
րի. կամ զինչ նմանութիւն է տա-
ճարի Աստուծոյ ընդ մեհենեաց:
Վասն որոյ նպաստաւորութիւն մա-
տուցանեմ քեզ զգուշանալ 'ի չար
յամառութենէդ. զի մի եկեսցէ 'ի
վերայ քո բարկութիւն տեառն. զի
թէ Բաղասամայր արքայ բաբելացւոց՝
որ զսպասս որբութեան յանարժան
տեղիս մատուցանէր՝ չարաչար տա-
տակեցաւ, ապա առաւել եւս քեզ
լինցի կորնչիլ, որ զդարշելիսն 'ի որ-
բութիւնն մերձեցուցանես. վասն
որոյ աղերսիս հայցեմ և փոխան ա-
զաչեմ ով Թադաւոր, մի փութար
'ի քոյին կորուստ: Մի զերկրաւոր
Թադաւորի պատկերդ յարգոյ հա-
մարեսցիս քան զպատկերդ երկնա-
ւորին. յիշեա զի գրեալ է, Ի պատ-
կեր իւր արար Աստուած զմարդն:
Մի փոխանակեր զմահկանացուդ

ընդ անմահին, զառօրեայդ ընդ մշանջենաւորին. զի այդմ պատ-
կերի նախագաղափարն վաղվաղակի
ջարաջար ըստ արժանւոյն կորնչելոց
է. իսկ ոգւոյդ քո կայ և մնայ
յաւիտենական պատրաստեալ զա-
թոռ իւր 'ի դատաստան, առ 'ի
մշանջենաւոր դատել զայնպիսիսն:
Վասն որոյ, ով թագաւոր, զարթիր
'ի թմբրութենէդ որ ոչ է 'ի քնոյ.
սթափեաց յարբեցութենէդ որ ոչ
է 'ի գինւոյ, այլ վայի արժանի.
հիւանդ ես հոգւով, մի զանմահ
մահն մեռանիր. կիսապօս ես առ
այժմ, մի բնաւ ապականիր. եկ 'ի
զղջումն փութապէս. ամբարձ յեր-
կինս զաչս քո, նայեաց 'ի բարձունս
առ տէր Աստուած քո: Ցիշեա
զարարիչն որ սաեղծ զքեզ յոչնչէ,
որ եհան զքեզ յարգանդէ. որ
կերակրեաց զքեզ 'ի մանկութենէ.
որ փչեաց 'ի քեզ զշունչդ. որ եա
քեզ զարքայութիւնդ. որ խոստա-
ցաւ քեզ զհանդերձեալն եթէ պա-
հեացես զպատուիրանս. որ իշխա-
նութիւն ունի կենաց և մահու քո.

յիշեա զնորհս աւազանին որով լուսաւորեցար. յիշեա զնուէր սրբոյ եկեղեցւոյ որով դաստիարակեցար. յիշեա զհաղորդութիւն մարմնոյ և արեան տեառն որով քաւեցար. յիշեա զնշանն տէրունական որով կնքեցար յաւուրն փրկութեան. որով և պահպանեալ եղեր. որով և փրկութիւն գտեր. յիշեա զմիւռանգամ գալուստն յորժամ ծագի նշան փրկչին 'ի յարեւելից պայծառ քան զարեգակն. յիշեա և զգնիլ աթոռոցն, զահեղ դատաստանն, զնրաքանչիւր գործոց հատուցումն, յորժամ Հայր և Որդի և Հոգին սուրբ բազմին յաթոռ փառաց. և զօրք հրեշտակաց յերկնից յերկիր հեղուն. մինչ զի թափուր լինել երկնից 'ի բնակչաց։ Որպիսի՜ լինիցի առեանն այն. յորժամ բանքն սպառին և գործքն թագաւորեն. յորժամ խրատքանչիւր ումեք յանցանք հրապարակայայտ լինին, և զարհուրեալ գոլան տարրեղէն արարածքս։ Անդ զայս ամենայն քեզ յուշ արարից,

յորժամ զղջացիս և ոչ օգտեսցիս. հառաջեսցես և ոչ հասանիս. խընդրես և ոչ գտանիս. զի կոչէի և ոչ լուար. յերկարէի զբանս և ոչ անսացեր. վասն որոյ այժմ լուր, մինչդեռ ժամանակս 'ի ձեռս է. մինչդեռ գոյ յոյս փրկութեան և ժամանակ ապաշխարութեան:

Անկիր առաջի տեառն արտասուօք և ապաչեա զերեսս նորա ապաշխարութեամբ. ասա, Մեղայ տեառն, որպէս Դաւիթ. և լուիցես պատասխանի, եթէ՝ Եթող տէր զյանցանս քո. արտասուեա ընդ Պետրոսի և ընկալցիս վերատին ըզշնորհս. ընդ Պաւղոսի յուշ արա զանգիտութիւնդ. ընդ մաքսաւորին քաւութիւն խնդրեա. ընդ աւազակին գոչեա մեծաձայն, Յիշեա զիս տէր յարքայութեան քում. և լուիցես ժառանգել զդրախտն աստուածատուն: Եր օրինակ բազմաց մեղուցելոց և վստահութիւն յուսահատելոց. որք 'ի քոյդ նայելով 'ի դարձ, գայցեն 'ի զղջումն ապաշխարութեան և յուսացին թողու-

թիւն գտանել. գոչեա ընդ Մանասէի, Զեմ արժանի հայել 'ի բարձրութիւնս երկնից 'ի բազմութենէ անօրէնութեան իմոյ. վասն զի կանգնեցի պատկեր և բազմացուցի ըզցասումն անձին իմոյ. և զայլս որ 'ի կարգին. որով հանգիպեացիս փրկութեան. ահա ծանուցի քեզ զամենայն ճշմարտապէս որով ապրեացիս։

Եւ յորժամ ամենայն բանքս այսոքիկ ոչ ազդէին 'ի միտս Թագաւորին, այլ կարծրացուցանէր ըզսիրտ իւր իբրեւ զաղբ գարբնաց. և խնայր զականջսն որպէս իժի և քարբի չարաթոյն գազանացն. և ոչ տայր տեղի թովչին ճարտարի, առնուլ գեղ 'ի գեղատուէն իմաստնոյ. յայնժամ զմարգարէականն 'ի կիր արկանէր զհրաման մեծին Դաւթի երանելւոյ սուրբ հայրապետին Յուսիկ. զորոյ զանուանն ասել քաղցր է 'ի լսելիսն իմ զորէն պատուիրանի տեառն առաւել քան ըզքաղցրութիւն մեղու 'ի քիմս ճաշակողաց ըստ հոգեբգողին. և զինչ գոր-

ծէր երջանիկն 'ի հովուապետս . զսատա բարկութեանն 'ի ձեռին առեալ իբրեւ զնեցուկս երկաթեղէնս . և զպատկեր պոռնկին իբրեւ զանոթս կաւագործաց խորտակէր , և տոփելով 'ի վերայ ոտամբ՝ բարբառէր . Ասուածք որ զերկինս և զերկիր ոչ արարին՝ կորիցեն 'ի ներքոյ երկնից . զի կուռք հեթանոսաց դեւք են . և զի եատեր հրաման 'ի վերայ իժի և քարբի գնալ և կոխել զամենայն զօրութիւնս թշնամւոյն : Եւ այսպէս առաթուր հարեալ զգունեալ գարշութիւնն , ընդ ոտիւք արկանէր զնմանալին Դողիատ . զժողովուրդ իւր ամբողջ պահելով յաներեւոյթ այլազգեաց : Եւ վանեալ մեծաւ յաղթութեամբ զվիթխարի վիշապն ահագին . զոր օրինակ մեծն Դանիէլ զգարշելին զայն 'ի Բաբելոնի . կամ իբրեւ զԴագոնն զայն 'ի ձեռն սրբութեան տապանակին առ քանանացիսն : Ընդ որ ցասուցեալ թագաւորին , զամենայն թոյնս դառնութեան իւրոյ թափէր 'ի նա փու-

թանակի. անօթի եղեալ սատանայի,
զկամն նորա կատարելով յօժարու-
թեամբ։ Եւ հրամայէր ձաղկել զնա
ուժգին. ոչ միայն ըստ Պաւղոսի
քառասուն միով պակաս, այլ մին-
չեւ յոգիս, զի զրաւեսցի 'ի կենաց.
որպէս և եղեւն իսկ։ Յորմէնաւ
հարեալ հանդոյն եղբօր տեառն
Յակոբայ. որոյ և փառայն հա-
զորդ գտեալ 'ի Քրիստոս. ո՛վ ան-
մեռութեան զինուորացն. ո՛վ ջա-
ղին սպասաւորացն. ո՛վ արքանե-
կաց բանաբերուն։ Յորժամ բար-
կանայր Սաւուղ 'ի վերայ քահա-
նայիցն և հրամայէր կոտորել զնո-
սա վասն կերակրելոյն զԴաւիթ,
ոչ առին յանձն սպասաւորքն. այլ
հրաժարէին ամենեքեան ասելով,
Ոչ մեսցուք զձեռս մեր յօծեալ
տեառն. մինչեւ Դոէկ ասորի սպա-
սահէր նոցա հրամանաւ Սաւու-
ղայ. և յորժամ յանդգնանէր Պաւ-
ղոս զքահանայապետն Անանիա
վասն հրամայելոյն հարկանել ըզ-
բերան նորա, և սպասաւորացն ա-
սացեալ՝ զքահանայապետ Աստու-

ծոյ հայհոյեա , ասէր · Ոչ գիտէի
եղբարք եթէ իցէ քահանայապետ ·
թէպէտ և գիտէր իսկ · յայտ առ-
նելով թէ պատկառել պարտ է յո-
ծուութեան շնորհէն · նա և ասէրն մեր
և Աստուած՝ յորժամ ածեալ լի-
նէր յատեան անաստուածից և
հարցեալ յանօրէն քահանայէն և
համարձակութեամբ առնէր զպա-
տասխանին , ապստամբեալ լինէր 'ի
ջարին սպասաւորէն և 'ի ջար հա-
տուցանողէն ընդ բարւոյ կեցուցչին
իւրոյ · որ և ասէրն իսկ · Ա՞յդպէս
տա պատասխանի քահանայապե-
տիդ · և այսպէս ամենայն ուրեք
պատկառէին 'ի պատուոյն · Իսկ ա-
քա միայն երեւէին լերեք և յան-
դուգն , ոչ ունելով զերկեւղն Աս-
տուծոյ և ոչ պատկառելով 'ի շնոր-
հէ քահանայութեանն · այլ զցան-
կութիւնն տատանեալ կատարէին
անմտութեամբ 'ի կորուստ անձանց-
զի նա մարդասպան է 'ի սկզբանէ
ըստ հրամանի վրիժին մերոյ · Ա-
մա՛ն անմտութեան ազգիս մերոյ ·
քանի՛ լուսաւորիչս խաւարեցուցին ·

ուրչափ աստուածաբան բերանս խը-
ցին. քանի՛ սիւնս եկեղեցւոյ տապա-
լեցին. զԱրիստակէս սրախողխող
արարին, զՎրթանէս հեռահալած
առնելով. զՅուսիկն ոգորածեծ
վճարելով՝ի կենաց. զմեծն Ներսէս
գեղակուր կորուսին. զսուրբն Սա-
հակ՝ի մեռալս առաքեցին. որք իբ-
րեւ ճրագունք վառեցան Հայոց աշ-
գիս. և մեք առ ժամանակ մի կամե-
ցաք ցնծալ՝ի լոյս նոցա։ Եւ ոչք
այսպիսի օրինակաւ վճարեցին զայս
կեանս։

Իսկ մանուկն Գրիգորիս, եղբայր
Յուսկանն երէց քան զնոյն, գեղա-
ղէշ գիմաք և բարձր հասակաւ,
հնգետասանամեայ կոչեցեալ յե-
պիսկոպոսութիւն Աղուանից աշխարհին. ծերունական հանճարով և
սրբասէր վարուք՝ զմեծին Գրիգորի
բերելով յինքեան զնմանութիւն,
հետիոտս ընթացեալ զերկայնաձիգ
ճանապարհն ըստ օրինակի փրկչին
մերոյ Յիսուսի, ճշմարտասէս ա-
նօթ ընտրութեան գտեալ փա-
ռացն Աստուծոյ ըստ երանելւոյն

Պաւղոսի. կրեալ զանուն արարչին առաջի խուժադուժ ազգաց և ժողովրդոց՝ քարոզութեամբ բանին կենաց։ Արիաբար 'ի մարտ մտեալ ընդդէմ բռնութեանն բանսարկուին. բոլորապատուղ զինքն մատուցանելով պատարագ ընդունելի 'ի հոտ անուշից տեառն՝ այսպէս և ըստ այսմ օրինակի. զի յորժամ եհաս յաշխարհն յայն և յանդիման եղեւ թագաւորին նոցա, զՃշմարիտ վարդապետութիւնն 'ի կիր արկանէր. և ջերմեռանդն սիրով քարոզէր նոցա զաւետարանն Քրիստոսի։ Եւ զի նոքա յառաջ էին հաւատացեալ քարոզութեամբ առաքելոցն և դարձեալ վերստին 'ի նոյն մոլորութիւն էին խոտորեալ, վասն որոյ զյեղյեղուկ և զդիւրափոփոխ բարս որպէս գործ էին ստացեալ, և յելուզակ արշաւանաց էին պարապեալ. վասն որոյ թէպէտ զառաջինն ընդունէին զբան վարդապետութեան երանելւոյ հայրապետին, բայց յորժամ տեսին թէ հատանել կամի զյոյս աշխարհի նոցա, առաւելա-

պէս 'ի նախանձ դրդէին : Եւ զի
քարոզէր նոցա մանուկն Գրիգորիս
ասելով, Ով մարդիկ , դարձարուք
առ տէր Աստուած ձեր և ծանե-
ցուք զարարիչն ձեր և զհաստիչ , և
մի յընդունայնութիւն ծախէք ըզ-
շնորհս բանականութեան ձերոյ և
զհանճար իմաստութեան , հաւա-
սարելով անասնոց անմտից , որք
ոչ ճանաչեն զարարիչն իւրեանց .
այլ գիտասջիք զի ձեր տէր գոյ յեր-
կինս . որ կարող է կերակրել զա-
մենեսեան բանիւ զօրութեան իւրոյ .
որ կեցուցանէ միշտ զկորուսեալսն
ըստ հաճոյից կամաց իւրոց . և ըզ-
հրամանէ նորա կախեալ կան ամե-
նայն եղական բնութիւնք . որ ասէ
արեգական և ոչ ծագէ . և զանձրեւ
'ի հուր փոխարկէ . որ թուէ զբազ-
մութիւն ասաղաց ; և զամենե-
սեան զնոսա յանուանէ կոչէ : Եւ
'ի բռին ունի զշունչ ամենայն կեն-
դանեաց . որ բանայ և ոչ ոք է որ
փակէ . և փակէ , և ոչ ոք է որ
բանայ . որ առնէ զհրաշակերտս և
զմեծամեծս որոց ոչ գոյ թիւ . որ

փակեաց զծով աւազով. և զթան-
ձրութիւն հոծ և կարծրագոյն խը-
ճողեալ երկրի՝ 'ի վերայ հոսանուտ
և լոյծ բնութեան ջուրց հաստա-
տեաց. և որպէս կամի փոփոխել զա-
մենայն անհնարինս 'ի հնարաւորու-
թիւն: Եւ արդ որդեակք, լուարուք
և 'ի միտ առէք զհրաման պատուի-
րանի տեառն. որպէս զի բարի լի-
նիցի ձեզ, և ողորմութիւն գտջիք
'ի մարդասիրութենէն 'ի դէպ ժա-
մանակի:

Զայս և առաւել քան զսոյն
քարոզէր և ուսուցանէր երջա-
նիկ հովուապետն Գրիգորիս 'ի
մէջ բազմամբոխ ժողովրդեանն այ-
նորիկ, յորդորելով զնոսա 'ի հա-
ւատս, և վարժելով 'ի գիտութիւն
ճշմարտութեան. որք թէպէտ և
զառաջինն տեղի տուեալ ունկնդիր
լինէին քարոզութեան սրբոյ առնն
Աստուծոյ, բայց յետոյ հրապոյրս
պղտորս և դառնացուցիչս արբեալ
սաստկապէս զարժանին վայի մա-
տուցողաց և ընդունողաց, և կարծ-
րացուցեալ զսիրտս իւրեանց որպէս

զՓարաւոնին և զնմանեաց նորին, և զբարեալ չարացն այնոցիկ 'ի չարա-
գոյն հօրէն չարութեան, չարապէս չարչարանօք զչարչարանս որբոյն հնարէին. կատարելով զկամս չա-
րութեան վիշապին, արբանեկին ի-
րեանց չարութեանն, որ հրապու-
րէր զնոսա յայնպիսի չարութիւն, Եւ զի՞նչ առնէին. նորահնար ի-
չարի գտակ եղեալ. զի հանդիսաւոր և հռչակելի չարութիւն գործեսցեն։ Եւ գտեալ 'ի դէպ չարին խոր-
հուրդս, որով յագեցուսցեն զանա-
սրտմտութեանն, զվայրենի ամ-
հութիւն քառաքեաց երիվարաց. որովաստորաքարշ ընթացութեամբ զկեանս որբոյն սպառէին, յածե-
ցուցանելով ընդ լայնանիստ մեծու-
թիւն դաշտին. զի խնամով մանրա-
մասնաբար երկարութեամբ գզեսցի մատաղ մարմին սուրբ հովուապե-
տին. յորոյ կարմրագոյն արեանն հեղմանէ՝ անբուսածին քարինք ծաղկէին, և թանձրագոյն հողն ո-
ռոգանէր, կանաչագեղ բոյսքն ծի-
րանեգոյն ներկանէին, և խռուա-

ցեալն գալարանայր։ Եւ մեծ քա-
հանայապետն և երջանիկն յամե-
նայնի՝ արդարեւ նմանեալ տեառն
իւրոյ մեծի հովուապետին, աղո-
թելով վասն հօտին իւրոյ փրկու-
թեան, ոչ միայն ոչ համարեալ 'ի
մեզս զյանդգնութիւնն աղերսէր,
այլ և ողորմութիւն գտանել 'ի
տեառնէ հայցէր։ Եւ այնչափ ջեր-
մեռանդն սիրով զգութ գորովոյ
հաստատուն ունէր, մինչ զի 'ի սատ-
րաքարշ ընթացքութեանն ոչ լինէր
կասեցեալ յայսպիսի խնդրոյս. այլ
մինչեւ յելանել շնչոյն զնոյնս աղ-
թէր. որոյ ոչ լինէր անպատուզմաղ-
թանք աղօթից սուրբ հովուապե-
տին. այլ 'ի յանկ ելեալ սիրապէս
կատարիւր խնդիր հայցուածոց նո-
ցին. զի մահուամբն իւրով և կա-
մաւոր չարչարանօքն շահէր զփրկ-
կութիւն նոցա. և հաստատէին 'ի
հաւատս Աստուծոյ։ Եւ յառնէր
յազգէ նոցա թագաւոր բարեպաշ-
տօն և երկիւղած յԱստուծոյ. և 'ի
խնդիր ելեալ մեծաւ յուսով նշխա-
րաց սրբոյ քահանայապետին, գտա-

նէր՝ի գեղջն Սմիւրնա. մեծապանծ հանդիսիւ ուսանիլելով զմիշտապակ նորա ցնծութեամբ ամ՝ յամէ՝ ի փառս Աստուծոյ։

Եւ որդ ոդքա ջորեքին շառաւեղք մեծի հօրն հաւատոյ որոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, սերեալք սերատութեամբ՝ ի նմանէն սիրապէս ոչ միայն բուս մարմնոյ, այլ և հոգեւոր շնորհացն գողովարատուղք գովելի երկամիք. սիրոգք որբութեան և քարոգք Ճշմարիտ որդւոյն Աստուծոյ. յերրորդանցիր ժամանակս պայծառացեալք պանծալի փառաւք. առաքեալք առաքելին, և սիրեցեալք՝ ի Ճշմարիտ սիրոյն. քահանայք պատուեալք քաղցրաւորոյց վարդապետութեամբ. արեգակունք կոզմանցս արեւու, և լուսատուք՝ ի խաւարի նստելոցս. ցնծութիւնք արամեցելոց, և ժողովոգք ցրուեալ հօտից. նարդոսք անուշարուրիչք, և քրքումք քաղցրաբուրիչք. սիեղերաց ծաղիկք, և աշխարհի խնդութիւն. պարծանք քրիստոնէութեան, և պատկեր

եկեղեցւոյ . միջնորդք խաղաղու-
թեան , և հաշտեցուցիչք արարչին
ընդ արարածս . օծեալք շնորհօք
Հոգւոյն սրբոյ , և փոխանորդք Ճըշ-
մարիտ օծելոյն . լուսաբաշխ աչով
օծանելով զամենեսեան յիւրաքան-
չիւր աշխարհս , քանզի հաւատոյ
և բարձրացուցիչք եկեղեցւոյ . վար-
դապետք ազգայացելոց , և գասախա-
ւակք զարգացելոց . ոմանց կանգն
չափելով 'ի Քրիստոս , և ոմանց
հաստատուն կերակուր ըստ Պաւ-
լոսի . պարիսպք շրջապատ եկե-
ղեցւոյն Քրիստոսի , և աշտարակք
ամրութեան հաւատոյ . 'ի յերկրի
խորանակիցք մարդկան , և 'ի յեր-
կինս գասակիցք հրեշտակաց . նա-
ւասակք Ճշմարտութեան , և նաւա-
հանգիստք ալեկոծելոց . Ամրք հա-
ւատոյ և պարծանք հաւատացելոց .
և արդ զի՞նչ է ասացից . զի սկս-
րանոյ բանս առ 'ի ներբողել զսա-
սա . ամենայնք յամենայնի , և ընդ
ամենայնի ամենայնք եղեալք զամե-
նեսեան ընդով . ասունկք սենչալիք
ասեն Թորգոմեան , և բարուեռակք

ծաղկեալք յայգւոջ սրբութեան, այսինքն է յեկեղեցի Քրիստոսի. բողբոջեալք բարի արդասիք ի զանազան ծաղկանց հաւաքումն. յօրինեալ պսակք վայելուչ՝ մեծապատիւ փառացն Յիսուսի։

Արիստակէս և Վրթանէս, Յուսիկ և Գրիգորիս, քառակի թուով պանծացեալք հանգոյն չորից տարերց՝ ի լուութիւն լման աշխարհի. լիացուցիչք լուսով լիապէս. յեղեմաբուղխ աղբերէն յառաջեալք ըստ քառառաջ վտակացն յարձակման, առ՝ ի զովացումն ծարաւելոց քառանկիւնի աշխարհի լման. սիւնք ամրութեան Աստուած խարսխեալք, միշտ յօգտութիւն հաւատացելոց. չորեքգիմեան կառք իմանալիք ըստ հրաշալի տեսլեանն Եզեկիէլի. ամենաբք փառաց որդւոյն Աստուծոյ. բարձողք լծոյ բարձրելոյն շնորհի, յորս հանգչի Աստուածն ամենի. փառաւորեալն ընդ Հօր և Հոգւոյն։ Ընդ սոսա և մեծն Դանիէլ գասակցեալ՝ երանելին և երջանիկն՝ ի հարս. որպէս

ասի՝ աշակերտ եղեալ յառաջա-
գոյն Լուսաւորչին մերոյ սրբոյն
Գրիգորի, և յերկարեալ մինչեւ 'ի
խորին ծերութիւն. ասորի գոլով
ազգաւ, 'ի զատական ցեղս որոշե-
լով. բայց համեմատ գոլով սրբոցս,
'ի սրբութեան վարս հաւասարեալ.
որ և յանապատի բնակելով հան-
գոյն մեծին Յովհաննու և Եղիայի,
և այնչափ առաքինասէր վարուք հա-
ճոյացեալ Աստուծոյ՝ և մեծագոյն
շնորհի արժանացեալ յարարչէն,
մինչ զի մեծապքանչ հրաշք և զար-
մանալիք կատարէին 'ի ձեռս նորա
'ի շնորհայն Աստուծոյ. որ զի թէ
հարկ հասանէր 'ի ձմերայնի ընդ
լեռնային վայրս ճանապարհոր-
դել, կամ վերանայր թանձրու-
թիւն ձեանն 'ի ճանապարհէն, և
կամ յափշտակեալ լինէր մարմնով
'ի տեղին յոր և կամէր գնալ սուրբ
ծերունին:

Եւ արդ 'ի ժամանակին յայն-
միկ յորում սուրբն Յուսիկ նահա-
տակեալ լինէր ձաղկմամբ 'ի Տիրա-
նայ թագաւորէն Հայոց ոզորածեծ

առնելով զնա, և 'ի կենդանեացս՝ փոխէր յաշխարհն կենդանի՝ արիա-
կան վկայն Քրիստոսի. և սուրբն Դանիէլ յայսմ ժամանակի կեն-
դանի գոլով յանապատի, և վասն հռչակելի առաքինութեանն՝ ա-
ծեալ լինէր 'ի Թագաւորն, զի կա-
ցուսցեն զնա յաԹոռ հայրապե-
տութեանն Հայոց՝ փոխանակ սրբ-
բոյ Յուսկանն։ Եւ խստագոյնս յան-
դիմանեալ զԹագաւորն և զսպա-
սաւորսն ծերունին սուրբ, 'ի յուշ
ածելով նոցա զապարատանութեան
գործս իւրեանց. վասն որոյ յա-
ւելեալ 'ի չարիս Թագաւորն զեւս
անմտութիւնն, խեղդամահ առնէր
զերանելին, ոչ պատկառելով 'ի
հրեշտակական վարուցն և 'ի պատ-
կառելի դիմացն. զի ԹԷ ընդ փայտ
դալար զայն առնէին ընդ չորն զի՞նչ
լինէր. այսինքն՝ եԹէ ընդ սուրբն
Յուսիկ որ շառաւիղ գոլով սրբոյ
Լուսաւորչին մերոյ և քահանայա-
պետ փոխանորդ յաԹոռ նորա, այն-
պիսի հարուածք անցուցանէին, ա-
պա 'ի սուրբն Դանիէլ, որ ոչ տզ-

գային գոլով ըստ մարմնոյ և ոչ յաթոռ սրբութեան բարձրացեալ՝, զիաիրդ խնայէին։ Ողբացէք ծառք անտառի և ծաղիկք դաշտի զանմտութիւն ազգիս մերոյ, եւս առաւել զթագաւորաց մերոց անզգամութիւն. վասն որոյ տայր զվրէժն, անձամբ վճարեալ զպարտս չարեացն յաստիսա ընդ մեծագոյն յամառութեանն. վասն զի կուրացեալ լինէր 'ի Պարսից արքայէն, առհաւատչեայ անտի տանջանացն զաստիս ընկալեալ պատուհաս. զի է՝ որոց աստ ներէ Աստուած և անդ տանջէ զչարս, և է՝ զորս աստ և անդ տանջէ, զի մի կարճամիտքն թէրացին։

Եւ արդ հնգէքին սոքա միաբանեալք 'ի միասին տօնախմբութեամբս, հնգից զգայութեանց մերոց լինին մաքրութիւն, և բարեխօսք միշտ առ Աստուած վասն տօնողացս զյիշատակ սոցա։ Զի տօնասիրութիւն տօնասիրաց՝ առանց չարչարանաց և նահատակութեան պսակակից առնէ սրբոց

զոնողս էբրեանց սիրով յուսով և հաւատով։ Եւ արդ, դուք ինձ, ով աստուածային գլուխք՝ ոչ մի կամ երկու, այլ հնգեքին 'ի միասին պատուեալք. զսակաւ հիւսուածս բանիս յաղքատիմաց մտացս և յանարժան անձնէ՝ սիրով ընկալարուք. թէպէտ և ոչ ըստ ամենարժեայ մեծութեան ձերոյ, այլ 'ի մէնջ ըստ կարողութեան հատուցեալ. և հատուսջիք մեզ յանապատ աղբերացդ ըստ մեծութեան շնորհի ձերոյ զառատ ողորմութիւն. զի այժմ առաւել ունիք համարձակութիւն բարեխօսել առ որում մերձ էք Աստուծոյ, քան յորժամ 'ի մարմնի տաղաւարէիք։ Այլ և խնդրեսջիք յամենողորմ տեառնէն աշխարհի զխաղաղութիւն, և եկեղեցւոյ սրբոյ զհաստատութիւն, և մանկանց նորին զմաքրութիւն և զսիրոյ կապակցութիւն, վերակացուաց բանաւոր հօտից զմիաբանութիւն և զուղիղ քարոզութիւն. ժողովրդոց զհաւանութիւն և զանդորրութիւն. և մեք խրախացեալք 'ի հոգեւոր սե-

ղանոյ ձերոյ , փառաւորեսցուք ըզ-
Հայր և զՈրդի և զՀոգին սուրբ ,
այժմ և միշտ և յաւիտեանս յա-
ւիտենից . ամէն :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՎԱՐՈՒՑ ԵՒ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆՑ

ԵՐՔԱՆԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ

ԱՐԻՍՏԱԿԻՍԻ, ՎՐԹԱՆԻՍԻ

ՅՈՒՍԿԱՆՆ,

ԳՐԻԳՈՐԻՍԻ, ՈՐԴՒՈՅ ԵՒ ԹՈՌԱՆՑ

ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ

Ամենագութն Աստուած որ ա-
սաց 'ի խաւարի լոյս ծագել, որ և
ծագեաց Ճշմարտապէս իսկ 'ի սիր-
տս մեր 'ի ձեռն երանելի նահա-
տակին սրբոյն Գրիգորի, որք նըս-
տէաք 'ի խաւարի և 'ի ստուերս
մահու, և ծագեաց այսպէս։ Արդ
յեւթն և 'ի տասներորդ ամի ար-
քայութեանն Տրդատայ՝ նստաւ
յաթոռ սրբոց առաքելոցն Բար-
թողումէոսի և Թադէոսի, սրբու-
թեանցն գտեալ քահանայապոր-
ծող, և ծնող մեր ըստ աւետարանին
և նախահայր աստանօր արտագրե-
լով։ Յետ այսորիկ ապա գնացեալ
եւս ընդ արքային Տրդատայ յաս-
տուածակարգ կայսրն Կոստանդիա-
նոս բազմաք ինն և նազելի և
վայելուչ մեծարանօք պատուէ ըզ-
սուրբ հայրապետն իբրեւ զկենդա-

նի մարտիրոս առաջի անկանելով. և ազգեն նուիրական և արհնու-
թիւնս 'ի նմանէն հայցելով, և այս-
պէս զնա պատուախրեալ, և Տրդ-
դատաւ հանդերձ համեալ յոսկեա-
պատ կառս, մեծաւ շքեղութեամբ
յուզարկէ զՃանապարհայն։

Զայսու ժամանակաւ յայտնեալ
լինէր Արիոս Աղեքսանդրացի, որ
դաւաճանեալ 'ի դիւէ անտի, ոչ
գոլ ասէր զՎրդի 'ի բնութենէ Հօր,
և ոչ հաւասար նմա և ոչ յառաջ
քան զյաւիտեանս 'ի Հօրէ ծնեալ,
այլ արարած, և յետ ժամանակի
գոյացեալ։ Վասն այսորիկ խսկա-
պէս ժողով եպիսկոպոսաց լինի 'ի
հրամանէ Կոստանդիանոս 'ի Նիկիա
Բիւթանացւոց, ընդ որս և մերն
Աղեքսանդրիա կոչեցաւ. և անդ հարք
երկքհարիւր ութեասանըստ հոգ-
ւոյն սրբոյ տուչութեան քակեալ
զազանդն Արիոսի՝ նզովեալ մերժեն
զնա 'ի հաղորդութենէ եկեղեցւոյ։
Խակ նորա զարժանի ամբարշտու-
թեանն կրեալ հատուցումն, և
խառն ընդ գարշելիսն 'ի վայր ըզ-
փորոտին վայթեալ ատակէր։

Իսկ ապա մերն Անխատակէս գար-
ձեալ գայր, բերելով ընդ իւր զար-
ժանընկալ քսան կանոնեալ գլու-
խս ժողովոյն. ընդ որ յաւէտ
խրախ լեալ Գրիգորի, յաւելոյր
այլ եւս գլուխս 'ի նոյն՝ 'ի զգուշու-
թիւն վիճակելոց իւրոց։ Բայց յոր-
մէ հեռէ եկն Անխատակէս 'ի ժողո-
վոյն Նիկիայ, այլ ոչ եւս յաւել
երեւել սուրբն Գրիգորիոս մինչեւ
ցվախճան իւր. այլ երթայր բնա-
կէր լուսէլեայն 'ի Մանեայ յայրան,
ըստ գրեցելուն թէ Ի նաւահան-
գիստ փուրթայ նաւ խռովեալ, և
անձն ժուժկալի՝ ինդրէ զանապատ։
Իսկ ապա լուսաւորութեանս մերոյ
նահապետի սրբոյն Գրիգորի և ա-
ռաքելական աթոռոյն նախաշաւիղ
ճանապարհի, յիսկզբանց անտի
կալոյ յաթոռ հայրապետութեանն
մինչեւ ցայնվայր, յորում ոչ եւս
յաւել ուժք երեւել, թուին ամք
երեսուն։

Իսկ սուրբն Անխատակէս ժառանգ
հայրենի աթոռոյն, ամենայն իրաք
զՀետ երթայր սուրբ և արդար վաս-

տակոց , Ջանացեալ քրիստոսասիրք կիսիւ նուաճել զհօտ իւր 'ի կամս Քրիստոսի , զոմանս հաւանողականաւ , իսկ զոմանս բռնաւորականով կարգով Ջանայր պահել յակատաՆի , և իբրեւ զսուր ինչ յազգեր միջոնելով զհոգւոյն շարժմունս , յանդիմանէր զորս գտանէր 'ի ջար գործս հակառակ հոգւոյն . ընդ որոց ապա և Արքեպիսկոպոս ոմն կուսակալ ծոփաց աշխարհին , կրշտամբեալ 'ի նմանէն սակս ջար գործոց իւրոց , ըստ գիպաց իմն 'ի Հանապարհի ուրեմն յաշխարհին ծոփաց ժպրհեալ , ոխերիմ մտաք սպանանէ զսուրբն սրով փախըստեայ ինքն գնացեալ յարեւմուտս Տաւրոսի . զոր ապա բարձեալ ընշխարեալ մարմինն նորուն աշակերտացն տարեալ հանգուցին յԵկեղեաց գաւառն , 'ի Թիլն աւանի , կացեալ յաթոռ հայրապետութեանն ամս եւթն : Ոչ թաղումն թերեւս զնորայն վարկեալ իմ , այլ փոխումն յայսմ աշխարհէ յաշխարհն կենդանեաց , ուր ոչ լսի

համբաւ մահու, այլ մշանջենա-
զուարճութիւն։

Իսկ զկնի սորա անգրանիկ եղ-
բայր սորուն Վրթանէս յաջորդէ
զաթոռ սորուն, որպէս և հաճոյ
թուեցաւ Հոգւոյն սրբոյ։ Բայց
հոգեւոր ճառագայթն մեր սուրբն
Գրիգորիոս ամս բազումս կացեալ
յայրս Մանեայ վախճանի, անգի-
տաբար իմն թաղեալ 'ի հովուաց՝
իբրեւ գտեալ զնա 'ի կարգ իմն աղ-
քատաց։ Իսկ զկնի բազում ամաց
գտանէ զսուրբ մարմինս նորա Գառ-
նուկ ոմն ճգնաւոր ասատուածային
իմն գոգցեալ տուչութեամբ. և տա-
րեալ գնէ 'ի գեւղն Թորգան, յիւր
իսկ զբօսանաց պարտիզկանն։ Զկնի
ամաց ինչ ապա և սուրբն Տրդատ ար-
քայ յանհամբուրելոյն բարոյ և յան-
հընազանդից ճշմարտութենն խար-
գաւանեալ խորամանկութեամբ և
տուեալ նմա արբուցումն մահու.
զոր տարեալ հանգուցանեն զմար-
մին նորա 'ի նմին աւանի 'ի նոյն
պարտիզկան, մերձ եղեալ 'ի քնա-
րանս սրբոյն Գրիգորի. որ համ-

մաս ընդ նմա իսկ զամենեսեան արտարոշէր 'ի Ճանապարհաց չարաց վերակացու երկրորդ լեալ լուսաւորութեանս մերոյ։

Իսկ մեծն Ալրթանէս, մինչդեռ էր նա 'ի Տարոն գաւառի, 'ի մասն Յովհաննու մկրտչի և Ամենագինեայ վկայի, մահ սպառնացեալ լինէր նմա 'ի ծածուկ ինքն 'ի բնակչաց Սիմ լերին, ոչք վասն ապիրատ և անազգակ չար գործոց միշտ յանդիմանեալ առ 'ի նմանէն լինէին։ Իսկ նորա զգացեալ ապա, և տեղի տուեալ չարին, գնայ փախստեայ 'ի գաւառն Եկեղեաց, անդ կալեալ իւր կայեան բնակութեան։ Իսկ յետ մահուան սրբոյն Տրդատայ անօրէնն Սանատրուկ երկրորդ ազգաւ յԱրշակունի տանէ, զոր կացուցեալ էր նահապետ Տրդատայ 'ի Փայտակարան քաղաքի, և յետ մահուան նորա ապստամբութեամբ բազմաւ թագ իւր կապեալ. ըստ ամբարիշտ հրամանի նորա բարբարոս հիւսիսական ազգքն այնոքիկ ըստանչելի մանուկն Գրիգորիոս,

զոր եպիսկոպոս Աղուանից կացուցեալ էին 'ի տոհմէ սրբոյն Գրիգորի՝ սպանանեն Ձիախրոխա ընթադրութեամբ 'ի Վատնեան գաշտին, և տարեալ հանգուցանեն զսուրբ մարմին նորա 'ի գեւզն Ամարաս՝ որ 'ի փոքր Սիւնիս։

Յետ այսորիկ ապա մեծն Վրթանէս չոգաւ գնաց առ կայսրն Կոստանդինոս որդի Կոստանդիանոսի, ըղձակերտութեամբ առ 'ի նմանէն հայցեալ թագաւորեցուցանել Հայաստանեացս զԽոսրով փոխանակ հօր իւրոյ Տրդատայ, զի Տիրեսցէ մեզ, ասէ, քրիստոսակարգ տէրութիւնդ ձեր, և մի լիցի մեզ տիրել Պարսից անաստուածից. զոր և ողջախոհաբար ընկալեալ զսուրբ այրն, և կատարեալ և զինդիրն, կացուցանէ թագաւոր Հայաստանեայց զԽոսրով։ Իսկ յետ մահուն Խոսրովայ մեծն Վրթանէս առեալ ընդ իւր զՏիրան որդի Խոսրովայ, չուէ գնայ առ կայսրն Կոստանդինոս թագաւորեցուցանել զնա փոխանակ հօր իւ-

լոյ։ Իսկ կայսրն ապա ըստ առաջին նուագին բազմապատիկ պատուով զնա մեծարեալ և առձեռն պատրաստ զհայցուածսն կատարեալ, առաքէ 'ի Հայս պայծառապէս զՏիրան թագաւոր պատկեալ, որ եկեալ ելիրէր հայրենի տէրութեանն։ Իսկ ապա անօթն ընտրութեան և խորհրդածուն խորոցն Աստուծոյ և առաքելական աւանդիցն քարոզ մեծն Վրթանէս լցեալ զկէտ կենացս փոխի յայսմ աշխարհէ յաշխարհն կենդանեաց, կալեալ զաթոռ հայրապետութեանն ամս հընգետասան, և տարեալ հանգուցանեն զնա ընդ հարս իւր 'ի գեւղն Թորգան։

Եւ յաջորդէ զաթոռ նորա Յուսիկ որդի նորուն, որ հետեւող հարցն առաքինութեան գտեալ հանդիսանայր միշտ 'ի բոլոր բարեկարգութիւնս։ Բայց յետ հրաժարմանն Կոստանդեայ, Յուլիանոս անօրէն թագաւորեալ 'ի Հռոմ, և հպարտացեալ 'ի վերայ գիտութեն Աստուծոյ, և կռամոլ գտեալ ու-

բանայը զՔրիստոս, և յարուցանէր հալածանս եկեղեցւոյ։ Ապա պատանդս 'ի մերն Տիրանայ առեալ, կամակատար իւր զնա կացուցանէր. և ապա զպատկերն իւր նկարակերտ, որ ըստ գիւաց պատկերից էր պատճուճեալ, հրամայէ Տիրանայ կանգնել յեկեղեցւոջ իւրում, և վասն զի առ վոտանգի երկեւղին՝ իւրովի Տիրան տարեալ զպատկերն կանգնէր յեկեղեցւոջ իւրում 'ի Ծոփս գաւառի։ Վասն այսորիկ գիմեալ 'ի տեղին սուրբն Յուսիկ, հոգեւոր վարդապետութեամբ տըրոհել զնա 'ի չար մոտածութենէն հնարէր։ Իսկ իբրեւ խնոյր ըսելիք առ 'ի ջսել, յափշտակեալ ապա զպատկերն 'ի ձեռաց նորա, և ընկեցեալ յերկիր, և տրոփեալ ոտիւք 'ի վերայ խորտակէր. ընդ որ և 'ի չարութիւն իսկ Տիրանայ բորբոքեալ, հրամայէ հարկանել զնա վարոցօք, մինչեւ անդէն աւանդէ զոգին։ Իսկ ծերունին Դանիէլ վասն այնպիսի չար անզգամութեան անիծակուր զալքայն արարեալ,

հրամայեաց ապա և զնա ե

ՀԵՂՈՒՄ ԳԼԱՒԱԿ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՁԵՆՈՎԲԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԶՈՐ ԱՐԱՐԵԱԼ Է ՎԱՍՆ

Ա Ն Տ Ո Ն Ի

ԵՒ

Կ Ր Օ Ն Ի Դ Ե Ա Ց

ԵՒ ԱՑԼՈՑ ՃԳՆԱՒՈՐԱՑՆ

ԱՐԴ իբրեւ եղեւ Եղանել սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ 'ի խոր վիրապէն, և զայնոսիկ որ գիւաղնեալքն էին՝ հանդերձ Թագաւորաւն բժշկեաց և գարձոյց յաստուածպաշտութիւն լուսաւոր վարդապետութեամբն իւրով, և 'ի հրամանէ Աստուծոյ ձեռնադրեցաւ 'ի սրբոյն Ղեւոնդէ մեծէ, և հիճնարկեաց զեկեղեցին զոր իմ աւե-

լն անուն ՝ի վերայ եդի՝ Գլակայ վանք . Եթող անդ պաշտօնեայս եկեղեցւոյն զԱնտոն և զԿրօնիդէս միայնակեացն , զորս ՝ի Կեսարիայէ ածեալ էր ընդ իւր . և զաշակերտն նոցա զԵպիփան հայր հաստատեաց. և Եթող ՝ի տեղւոջն կրօնաւորս քառասուն և չորս . և երկոտասան դասատակերաս եկեղեցւոյն ՝ի ծառայութիւն կարգեաց : Եւ ինքն գրեաց թուղթ առ Ղեւոնդ հայրապետն Կեսարիոյ , այսպէս .

Զառ ՝ի յաստուածուստ պատուեալ և ՝ի մարդկանէ փառաւորեալ տեառն և աստուածարեալ հայրապետիդ Ղեւոնդեայ Մեդաղու Կեսարեայ հոյակապ քաղաքի , որ ՝ի ձերոյ սրբոյ ձեռնադրութենէդ և ՝ի մեր փանաքիմացութեանցս առաջին թուղթ ողջունիս և սրբութեամբ հացէ . որով միշտ զխաղաղութիւն պարգեւեացէ նախ ձերում փառաւորութեանդ և ապա բոլոր տիեզերաց :

Յոյժ գոհանամք զԱստուծոյ որ հայրախնամ ողորմութեամբն իւրով գթացաւ յազգս մարդկան ինչմամբ Որդւոյն իւրոյ միածնի, որ զամենայն ազինս հրաւիրեաց յերկնային քաղաքն 'ի ձեռն առաքելական քարոզութեանն. յորմէ և այս աշխարհի կարի առաւել մասն պարծանաց եհաս. զի երկոքեան ամոլքն ասա կատարեցան ըստ բաժնի Հոգւոյն սրբոյ. որ թէպէտ և առ նոքաք վերջացան 'ի ճշմարտութենէն, սակայն ողորմութիւնն Աստուծոյ գթացեալ և առ մեր նուաստութիւնս, 'ի մերում ժամանակի կամեցաւ և գործեաց զաքանչելիսն, զոր դու իսկ լուար 'ի մէնջ և ծանեար: Մանաւանդ կրկին իսկ գոհութիւն Աստուծոյ մատուցանեմք, առաւել և ձեզ օրհնութիւն, զի զգանձն կենաց աննախանձ շնորհեցէք աշխարհիս Հայոց. զմիջնորդին Աստուծոյ և մարդկան զսրբոյ Կարապետին Յովհաննու զնշխարան, որով ցնծաց աշխարհս Հայոց սորա

գալատեամբս , որպէս Յորդանան Քրիստոսի գալատեամբն : Եւ զայն գիտուլթեան աղագաւ ձեզ ծանուցանեմք . զի որպէս Քրիստոսի ինքմամբն 'ի Ջուրն՝ մահ կորեաւ . այնպէս և սոսա 'ի սորա գալատեանս , զի գԺոխոց գրուռնք բնաւ փակեցան : Զի է սա սոսա յերկրին Հայոց 'ի յերրորդ աւարտին լեռինն՝ որ կոչի Տորոս , և հատեալ անցանէ մինչեւ 'ի գուռն Պահլաւ Պարսից . և սա նոցա բնակին երկիրն Մամիկոնէից բազում վայելուչութեամբ և առատութեամբ պիտոյիւք . որ և որքացեալ էր մահ յերկուս տեղիս . ուստի և հրամանաւ Հոգւոյն ձեռն 'ի գործ արկեալ՝ կործանեցի զպատկերսն սատանայի , և եդի 'ի մատենի անխախտելի վնջխարս որոց վկայեցն , որ և այժմ պատուական երկրպագի : Իսկ զերկուս կենդանի վկայսն Քրիստոսի զոր գու յղեցեր ընդ իս զԱնտոն և զԿրծնիգէս Թողի 'ի տեղին ուր Գիսանէսն կործանեցաւ . զոր տեղի Ինեակնեան նոր կոչեն : Որոց կէս

եղեալ զվարս իւրեանց յաշխարհի. զի խաչեալ իսկ են ընդ մարմին իւրեանց ընդ Քրիստոսի և արդ մնան վասն բազմաց փրկութեան. զորս իբրեւ զանգիւտ մարգարիտս համարիմ զնոսա առեալ ինձ։ Բայց վասն մեր մանկան սիրոյդ զոր ունիս ընդ իս, ապաչեմ զի զմիւս այլ ընծայն շնորհեսցես. զի հունձք բազում հասեալ են 'ի Քրիստոս, բայց զքեզ իբրեւ զՀշմարիտ աէր մշակաց, զի հանցես մշակս 'ի հունձս յայսոսիկ։ Յորոց մինն 'ի քաջ մշակաց զոր ես խնդրեմ 'ի քէն՝ Եղիազարոս՝ Նիւսարիացւոց եպիսկոպոսն՝ որ է եղբայր Զենոբայ եպիսկոպոսի, զոր ընդ իս ածեալ ձեռնադրեցի երկրիս Մամիկոնէից։ Արդ և զգա յղեսցես հանդերձ այլ մշակօք մանկաւոքք. մանաւանդ թէ զՏիմոթէոս Ագոնացւոց եպիսկոպոս յղեսցես, զոր գու իսկ գովէիր զՀմտութիւն գպրութեանն, որ յոյժ պիտանի է երկրիս այսմիկ. որով օգնութիւն գտեալ 'ի քէն աղօթից և խնդրուածոց, ուստի յա-

բաժամ Ճգնութեամբ՝ բազմաց օրի-
նակ գոլով գաստիարակելով շը-
նորհիւն տեառն։ Ողջ լիցիս վասն
բազմաց փրկութեան 'ի տէր ։ մե-
ծոյ բարեխօսութեան յառաջնեան
և 'ի նեբկայսա։

ՊԱՏԱՍԽԱՆԻ ՊԱՑՄԱՆԱՒՈՐ ԳՐՈՑ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ, ԶՈՐ ՑՂԵԱՑ ԿԵՍԱՐՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՆ Ի ԺԱՄ ՎԱԽՃԱՆԻՆ

Երչանիկ և աստուածարեալ տեառնդ եղբօր և աթոռակցիդ

Եհաս առ մեզ գիր ուրախարար, և յոյժ անթերի ուրախութեամբ լցեալ կազդուրեաց զվշտագնեալ անձն իմ. որ թէպէտ և 'ի տրտմութեան էի վասն իրիս հասելոյ, սակայն շարժեաց զմերս դանդաղութիւն ձեր գոհութեան նամակդ. զոր եւս առաւել գոհութիւն մատուցանեմք Աստուծոյ ըստ գրեցելոյդ 'ի քէն, որ ոչ անտես արար զձեզ յիւրմէ սքանչելի ողորմութենէն. որք բազում ժամանակս մոլորեալք ընթացան ընդ խաւար կռապաշտութեան՝ 'ի ճանապարհէ երկնային պողոտային. 'ի գէպ

եկեալ նոցա մարգարէութեանն բան, թէ Յոզովուրդ որ նստէիք 'ի խաւարի անգիտութեան՝ տեսէք զլոյս մեծ։ Զի թէպէտ և վաղ ծագեաց արեգակին արդարութեան, սակայն ազգ քո իբրեւ 'ի մէջ գիշերի շշափէին զորմ կռապաշտութեան. յորս հայեցեալ Աստուած էջ 'ի փրկել 'ի ձեռաց անմարմին Փարաւոնէ, կրկին մովսէսեան գաղափար զքեզ տուեալ դոցա յաստուածակոյս կոզմանն. և դու ընտրեցար դոցա 'ի տեղի սուրբ առաքելոցն Բարդողոմէոսի և Թադէոսի. յիշեա զնոցա նահատակութիւնն և մի երբէք վերջանար 'ի շաւղաց նոցա, զոր ետ քեզ տէր 'ի շինել և ոչ 'ի քակել. և չիք ինչ պատճառ. զի և մուտ սրբոյ Կարապետիս սկիզբն է շինութեան։ Բայց աղաչեմ մի մոռանար և զիմ երախտիքդ զոր արարի ձեզ. զի և ես օրհնութեան գտայց արժանացեալ։ Եւ զտեղիսն Յննակնեան՝ զոր ոմանք Բարեբուխ կոչեն՝ կացո կրօնաւորք և վանք շինեա ըստ օրինակի

այսց կրօնաւորացս զոր տեսեր 'ի մեր աշխարհիս. և 'ի սրբոյն Անտոնէ առաւել ուսցիս զվարս ճգնութեան, որ ոչ ինչ պակաս է 'ի հրեշտակաց։ Եւ զԵպիփան աշակերտդ Անտոնի հաւանեցուցի գալ առ ձեզ, ունելով ընդ իւր արս քառասուն ճրգնաւորս և խարազնազգեստս, պարկեշտք 'ի վարս և հրաժարեալք յաշխարհէս. զոր առեալ կացուցեա զԵպիփան հայր վանացդ Զենովբայ։ Դրոշմեսջիր արձան յաւիտենից, զի մի ոք 'ի դասատակերտս կամ 'ի գեղաքաղաքս զօրէն Աղեքսանդրացւոցն գործեսցէ, շինելով իւրաքանչիւր ումեք խրճիթս շուրջ ըզտէրունեան տաճարաւն, և առանձինն բնակել տղաչեմ մի տար հրաման, այլ ժողովել 'ի մի տեղ հաւրիւր արանց չափ. և որոշեսցես նոցա դասատակերտս և աւանս, որպէս զի պէտք վանացն 'ի նոցանէ վճռեսցին, և ինքեանք միայն աղօթից և ճգնութեան պարապեսցին։ Խրատեա և զիշխանս լինել աղքատասէրս և ողորմածս։ Իսկ զշինուածս

մատրանն մի չինեսցես կրօնաւո-
րանոցս , այլ կացուսցես անդ քա-
հանայս և քորեպիսկոպոսս , և որո-
շեսցես նոցա դատաւորս դարմա-
նիչս աղքատաց և որբոց : Բայց մեզ
աղօթս արասցես , զի յերեւել Ճըշ-
մարիտ հովուապետին՝ ընկալցուք
զերկնից պսակն : Ողջ լերուք 'ի տէր:

Եւ առեալ զպատասխանիսն բե-
րին առ սուրբն Գրիգոր . իբրեւ
լուաւ՝ ուրախ եղեւ յոյժ :

Եւ յետ ժամանակաց ինչ լուր
եհաս 'ի գուռն արքունի , եթէ կոս-
տանդիանոս կայսր հաւատաց յԱ-
ստուած , և դադարեցոյց զհալա-
ծումն յամենայն եկեղեցեաց : Ապա
խորհուրդ 'ի մէջ առեալ գնալ 'ի
գուռն կայսեր վասն գնելոյ գաշինս
'ի մէջ իւրեանց . և իբրեւ եկին և
յանգիման եղեն Տրդատ Գրիգորիւ
հանդերձ 'ի գուռն ծիրանափառ
Ոգոստեայ , և եդին զդաշինսն 'ի
միջի՝ վկայիւն Աստուծոյ մեծիւ
խոստովանողաւն և երանելեաւն

Սեղբեատրոսիւ հանդերձ Քրիստոսի հաւատացեալովքն՝ զոր ընկալան 'ի տեառնէ։ Եւ յետ աւուրց բազմաց եկեալ 'ի նմանէ մեծաշուք պատուով ընդ իւրեանս ունելով ըղգանձն աստուածային, զոր ետ արքայն Կոստանդիանոս զահեակ ձեռնն Անդրէի առաքելոյ, և այլ ինչ 'ի Պետրոսէ և 'ի Պաւղոսէ։

Եւ յորժամ եկին յԵկեղեաց գաւառն՝ կատարէին զյիշատակ Կարապետին որ յետ պենտեկոստէին, զոր 'ի Նաւասարդի 'ի մին էր կարգեալ. բազում ցնծութիւն և ուրախութիւն աշքատաց և պատժապարտաց արձակել 'ի բանտից շնորհեաց։ Եւ իբրեւ եկին 'ի տեղեան Ինեակնեան, խնդիր արարին սրբոցն Անտոնի և Կրօնիդեայ։ Իսկ պաշտօնեայքն ասեն. Այս ամ մի է զի ոչ եմք տեսեալ զնոսա։ Եւ տրամեցաւ թագաւորն յոյժ, զի 'ի վաղնջուց ցանկայր տեսանել զնոսա։ Իսկ սուրբն Գրիգոր առաքեաց խնդրակս զԱղբիանոս եպիսկոպոս 'ի խուցս նոցա հանդերձ երբ

կու սարկաւագք, տուեալ նոցա
խրատ թէ Յառաւօտուն պահուն
եկանեն յանուանէն 'ի բլուրս ու-
րեք, և գուք անդ կացէք զդոյշ, զի
մի զձեզ տեսեալ փախիցեն։ Եւ զա-
ւուրս չորս ոչ կարացին գտանել.
իսկ 'ի լուսանալ աւուրն հինգերորդ-
դի՝ լուան զձայն սաղմոսերգուութեանն
նոցա, զի գային յանուանէն յարե-
ւելից կուսէ 'ի քաղցրահամ աղբե-
րէն. և եկին 'ի բլուրն երեւելական
տեղւոյն Արարից Դեմեարեայ, զոր
կոչեն Արեւու բլուր. զի անդ էին
գարափոր խցկունք նոցա։ Եւ իբ-
րեւ մերձեցան 'ի գլուխ լերինն,
սկսան սաղմոսել այսպէս. Լսելի
արա ինձ առաւօտուց զողորմու-
թիւնս քո, զի ես 'ի քեզ տէր յու-
սացայ։ Իսկ Աղբիանոս ասէ. Հոգի
քո բարի առաջնորդեսցէ ինձ յեր-
կիր ուղիղ։ Եւ ազօթեալ անդ ասէ
Անտոն ցԱղբիանոս. Բարի եկիր
ճանապարհորդ խաղաղութեան։
Իսկ նա ասէ. Բարի և խաղաղու-
թիւն ընդ ձեզ մշակքդ Աստուծոյ և
օթեւանք հոգւոյն սրբոյ. այլ և ա-

ւեմք ձեզ, զի սուրբն Գրիգոր և Տրդատ 'ի բնակութիւնս ձեր են և յոյժ խնդրեն զձեզ։ Իսկ նոքա ասեն. Նաեւ ձեզ եւս առաւել ուրախութիւն և աւետիք, զի այսպիսի բարիք Աստուած 'ի ձերում ժամանակի յայտնեաց, և զսատանայ կործանեաց, զհոգեւոր խաղաղութիւն աշխարհի պարգեւելով արարչին յաւիտենից։ Եւ իսկոյն առաքեաց Աղբիանոս զսարկաւագունն առ հայրապետն աւետաւորս։ Եւ սուրբն Գրիգոր առաքեաց առ Տրդատ աւետաւորս 'ի ստորոտ Արձանին զնոյն սարկաւագունն։ Որ յոյժ ուրախութեամբ լցեալ եկն 'ի վանսն հանդերձ գլխաւորօքն. Իսկ զսեղանն ուր զաւետիսն ետուն՝ հրամայեաց վէմս ժողովել, զոր և կոչեմք Աւետեաց խաչ։

Իսկ սրբոյն Գրիգորի առեալ ըզդասս պաշտօնէիցն, զանտառսն հնչեցուցանէր. Իբրեւ մերձ եղեն 'ի բլուրն՝ նոքա ընդ առաջ գային. և միաբանեալ 'ի բլուրն աղօթեցին։

Եւ յետ ողջունին ասէ սուրբն Գրի-
գոր . Բարիոք գտաք զձեզ և խաղա-
ղութեամբ առաւօտք բարեաց : Իսկ
նոքա ասեն . Բարի եկիր արուսեակդ
արդարութեան , որ զմիեզերս լու-
սաւորես . մշակ առանց ամօթոյ և
աշխատնակ բարձրագոյն քան զեր-
կինս : Եւ կարդացաւ անուն տեղ-
ւոյն Աւետեաց բլուր : Եւ իբրեւ
եկին յեկեղեցին , հանդիպի նոցա
Թագաւորն , և հայցէր օրհնիլ 'ի նո-
ցանէ . և յարուցեալ համբուրեաց
զնոսա , և նստան առաջի վկայարա-
նին : Եւ նոքա բազում վարդապե-
տութեամբ խօսէին ընդ նոսա , և
ուսուցանէին զարբութեան կրօնան :
Իսկ Թագաւորն մեծ գոհութիւն
Աստուծոյ մատուցանէր : Եւ կա-
ցեալ 'ի տեղւոջն զաւուրս տասն և
հինգ , ապա յետ այսորիկ գնաց 'ի
բուն կայանն արքունի 'ի Վաղար-
շապատ քաղաք :

ՎԱՍՆ ՄԱՀՈՒԱՆՆ ԱՆՏՈՒՆ ԵՒ ԿՐՕՆԻԴԵԱՑ

Զենոբ եկաց հայր Գլակայ վանացն զամս քսան։ Յետ մահուանն Զենոբայ եպիսկոպոսի՝ յաջորդէ զաթոռ նորա Եպիփան աշակերտն Անտոնի ամս երեսուն. 'ի սորա տասն ամին եկն սուրբն Գրիգոր առ Անտոն և Կրօնիդէս բնակել առ նոսա յանապատին. իսկ նոքա հանին անտի ասելով. Գնա յանծանօթս ուրեք, զի մի ասա փառաւորութիւն մատուցեն քում սրբութեանդ։ Իսկ նորա երթեալ բնակեցաւ 'ի Մանեայ այրս, որպէս ասի լինել անդ ամս եօթն, փոխի առ Քրիստոս։ Ստեփանոս աշակերտ Եպիփանու ամս հնգետասան. 'ի սորա չորրորդ ամի վախճանեցաւ սուրբն Անտոն. և յետ երկրորդ ամսոյ սուրբն Կրօնիդէս, կացեալք ամս քառասուն յԱննակնեան վանսն, սակաւ ինչ հեռագոյն յեկեղեցւոյն ըստ փարաւոյ կուսակ։

Ց Ա Ն Կ

Ժ. ՀԱՏՈՐՈՑ

Ներբողեան յՈրդիս և 'ի Թոռանս սրբոյ Լուսաւորչին . 5
Պատմութիւն վարուց Որդւոց և Թոռանց սրբոյ Լուսաւորչին . 47
Զենոբայ Գլակայ պատմութիւն վասն Անտոնի և Կրօնիդէայ և այլոց Ճգնաւորացն 59